

ՀԱՄԱՔԱՆԱԿԵՐ ՌՈՒՄԱԿՈՅ



ՀԱՄԱՔԱՆԱԿԵՐ ՌՈՒՄԱԿՈՅ լրագիրը հրատարակուում է իրաբանչիւր ամսի 10 և 20 և տարեկան գինը ճՈՒՔԱՂԻ հետ 'ի միասին է 3 օուր. արծաթի իսկ կէս տարուանը 3 օուր. արծ. կանխիկ վճարելի:

ՆՈՅՆՄԱՐԻ 20 Տ. 8 1861 ՄՄԻ

ԱՎՈՐՈՒՄ ԵՒ ԿԵՍ-ԳԻՅԵՐԱՅԻՆ ԱՐԵՂԱԿ

Ավազաբաս, որ աշխարհագիրք լեռան են անուանում, ոչ այլ ինչ է, եթէ ոչ՝ մի փոքրիկ բլուր, 600 ֆուտ բարձրութեամբ, այն գետոյ եզերքումը, որ բաժանում է Շ վեցիայն Պինդանտիայից, Պինդանտան Օֆիլեր-Թօրնէօ և Շ վեցաց Մաթթարէնի գիւղաքաղաքների միջոցում: Այս տեղ եկաւ 'ի 1736 Թուականին երեւելին Մօիէրթիւի՝ Օնթիէ Երբայի հետ 'ի միասին, այն յանձնարարութիւնը կատարելոյ համար՝ որ յանձնած էր նորան. փարիզու ձեռնալանն գիտութեանց:

Ի սկզբան՝ Մօիէրթիւի բնակեցաւ Ավազաբայի մօտ, Փէլսօ անունով մի փոքրիկ գիւղաքաղաքի մէջ, և զարմացուցա-

նում էր խեղճ գիւղացիքը, որք նայում էին նորա աստեղաբաշխական մեքենաների և անվերջանալի հաշիւների վերայ որ նա առնում էր, և փոքր մնում էր՝ որ կախարդի տեղ պիտի համարէին նորան: Ի այց Մօիէրթիւի յաջողապէս վերջացոյց իւր տեղեկութիւնը Ավազաբայի դագաթումը, և յետ 70 ամաց, մի և նոյն տեղի վերայ երեւցաւ Շ վեցաց աստեղաբաշխն Մվանպէրի: Այսպէս Ավազաբաս երկու անգամ նշանաւոր եղաւ գիտութեանց պատմութեան մէջ. բայց յայսմանէ, կան այլ ևս արժանի յիշատակի իրք՝ որ հռչակաւոր կացուցանում են նորան:

Յայտնի է՝ թէ Հիւսիսային երկիրներն՝ ընկղմեալ գոլով բոլոր ձմեռնային եղանակում մութ խաւարի մէջ, ամառը վայելում են շարունակապէս արեգական ճառագայ-

ՇՆՈՐՀԱՌՈՐՈՒԹԻՒՆ ՏՕՒՆ

S. S. ՄԱՏԹԻՈՒ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

ԱՄԵՐԱՅՆ ՀԱՅՈՑ

«Աղբիւր կենաց և փրկութեան մերոյ Հոգի Հօր և Որդւոյ, 'ի յարմատոյն Յեսուսայ ըղխման դաւաղանի՝ հասեալ ժամու Հորհաղարդ պայծառացոյ զգաւազան իշխանութեան մերոյ Հայրապետի»:

Հարկան:

- Քաղցրացի բեղ ձայն ինչոյ նուագի,
- Ին՝ անկողնի վերջագետց սիրուն ձեռ Հայկայ,
- Իւր զու բարբառոյ բո հէք զուակի,
- Եւ ունկրն մատո բանիս զու զնարբայ:
- Ըմենադորն Աջ Ամենակալի
- Հաճեցաւ մերկել ըզքն վերջաց բուրձ.
- Եւ բեղ խնամածու ըզվէ՛՛ ձերանի,
- Ար բոցոց ցանկայ բարբառս աւուրց:
- Սա սուրբ հաւատոյ ախոյեան անվան,
- Օ օրացեալ օձմամբ իւրոյն սրբբայլոյս,
- Որ ըստ խորհրդոյ իւրու՛մն անուան՝
- Ի բարոզ բանին կենսախորրակոյս:
- Իբրև աշալուրջ ղեկավար ճարտար
- Նրստեալ կայ 'ի խելս ազգային նաու,
- Կառավարել զայն հաւատարմարար
- Յայսմ ալեսասա յաշխարհիս ծովու:

- Օ ազգայինն օգուտ կարեալ նրպատակ,
- Չ անայ՝ որչափ է ինքն ձեռնհաս:
- Չբտալ նաւակին 'ի բազմակոհակ
- Ի ծովուն այեաց կրել ինչ վնաս:
- Իբրև առաւօտ լուսոյ բերկրածագ
- Ընհետ հալածէ ըզմէ՛՛ մթնութեան.
- Օ ողբեհա՛՛ ուսմանց վառեալ ըղձրբագ
- Ը ազնորդ Ուղոյն լինի փրկութեան:
- Ը հա՛ բեղ, իմ աղբ, Բարձրեան Աստուած
- Իացեալ է զդուան գթութեան առատ.
- Կաւ այլ մի գո՛ւր Տեղմամբ արտասուաց,
- «Ո՛ր է Հայկ, Արամ, Տիրբան և Տրդատ»:
- Ը հա՛ քոյ խնամող Հովիւ անձնաղիր,
- Ը հա՛ յարարթուն հրեղոլ Գիտապետ.
- Ը իւր նորայն ձայնի, ըզնա՛ զու ձանիր.
- Ը զնորուն շաւղաց զընն միշտ ըզհետ:
- Յընծացո՛ւք հապա ցընծութեամբ հոգոյ.
- Ի յաւուր տօնի Պետիս Վ Ե հախաւ.
- Կացեալ 'ի յաղօթս հանդէպ սեղանոյ,
- Մաղթեցո՛ւք նմա ըզկեանքս յերկար.
- Ը իր խընդա՛ և դու, մայր եկեղեցի,
- Օ հարմութեան զգեցիր պայծառ պատմու՛ճան.
- Թող այսօր 'ի բեղ նոր տօն խմբեսցի,
- Յիշատակ Հովուիս Առաքելազան:

ԱՔԻՆԱՆՑ ԳԱՆՆԱՍԵԿԱՆ ՆԱԳԱՐԵԱՆԵՑ

Հոկտեմբեր 1861 ամի: ՍԱՀՏԵՐՈՒՆ

Թից զուարճութիւնը: Արքան մօտենանք դէպ 'ի բեւեռը, այնքան օրերը մեծ են: Ե փիցպէրկէնի վերայ կարելի է տեսանել այս երևոյթը՝ Յունիսի 13 ին (25 ին ըստ նոր տուամարի):

Այն օրը՝ Մաթթարէնկիյի և Օֆօլէր - Թօրնէօյի անպաճոյճ անակներն մի այլ ձև են ստանում: Ամենայն տեղ տեսնուում են Թանկագին զգեստք. ոսկին փայլում է եղևնեայ սեղանների վերայ, ուր՝ ուրիշ ժամանակ՝ հազիւ թէ տեսնուում է մի արծաթի թախիբ. տների պատշգամբից վերայ լսուում են զանազան լեզուների ձայներ, երբ որ ամբողջ տարուում՝ ոչինչ չէ լսուում բաց 'ի Եփեսոսց բիրտ և սաստկահնչուն ձայներից: Այս տեղ հաւաքուում են հետաքրքիր մարդիկ՝ Նորվէկիայից, Եփեսոսցից և Ռուսաստանից, ևս և Ներոպայի հարաւային երկիրներից: Ե ատանգամ պատահում են այս տեղ և Նեղոզացիք՝ որք Զուրմի մէջ Քրիստոսի ծննդեան օտնը կատարելուց յետ, ցանկանում են անշուշտ տեսանել և հետեւելու Նվազաբայի վերայ: Պատում են՝ թէ 30 տարի յառաջ, մին Նեղոզացի եկեր է Մաթթարէնկի՝ այն օրի երևելի հանդիսին ակահատես լինելոյ համար, և մին խուց է վարձեր: Յունիսի 13ին կատարուելու հանդիսին ներկայ գտանուելու ցանկութեամբ՝ անցեր է նա բոլոր Ներոպան, և ոչ մի տեղ չէ դադարած՝ որ մի գուցէ իւր երևակայութիւնը խանդարէ, և ոչ մի անգամ ևս չէ նայած ճանապարհին պատահած երևելի իրաց վերայ, և ոչ իսկ այն մարդոց և ազգաց վերայ, որք շրջապատում էին նորան: Ամի 12 ին՝ արեգակն գեղեցիկ և պայծառ երևոյթ է ունեցած, և չէր կարելի կարծել՝ թէ նա միւս օրը չպիտի երևի իւր շքեղ կերպարանաւն, այն մարդոց՝ որք ցանկանում են տեսանել նորան: Նեղոզացին կանգնում է Նվազաբայի զագաթի վերայ, շփում է ձեռքերը և սպասում է կէս գիշերին: Բայց նոյն իսկ ընդհին՝ երբ որ արեգակն 'ի մայր պիտի մտաներ, հասանում է մի Թիպագին Թանձրագոյն ամպ, և ծածկում է արեգակը այնպէս, որ նորա ճառագայթից մի նշոյն ևս չէ հասանում մարդոց աչքին: «Միշտ և ամենայն տեղ անպաճոյթութիւնը ետեկցս է վազում» ասելով՝ շարժում է Նեղոզացին բարկութեամբ իւր ձեռքը, իջնում է Նվազաբայից լուռ ու մունջ, դառնում է իւր խուցը, և ատրճանակով սպանում իւրեան:

Այդ գիշերը (Յունիսի 12 էն դէպ 'ի 13 ը), որ հին ժամանակուում օտնում էր, և որ քրիստոնէսայք փոխեցին և անուանեցին՝ օր Յովհաննու Մկրտչի, մինչև ցայժմ ևս կատարուում է մեծ հանդիսով հիւսիսային երկիրներումը. առաջին ժամանակներումը օտնում էին նմանապէս այն օտնը և Հարաւային երկիրներումը, բայց այս սովորութիւնս ոչնչացաւ, և միայն քանի մի հեռաւոր և անշուք գիւղերումը յիշատակում են Յովհաննու Մկրտչի օրը:

Նվազաբայի շրջակայ բնակիչքն այն գիշեր կրակ են վառում բլուրների և սարերի վերայ. ցնծալից պարերդուաց բազմութիւնք հաւաքուում են կրակի չորս կողմը. նոցա միաձայն նուագերդութեանց հնչմունքն օղը լընում են. ով որ

կղած է այդ օրը՝ Քուէրպէրկուումը (Քրէսթովաբից անուանեալ կղզոյն վերայ Փեթերպուրկուումը), նա կարող է հասկանալ Նվազաբայի վերայ կատարուած օտնի շքեղութիւնը և փառաւորութիւնը, միայն այնու զանազանութեամբ՝ որ այն տեղ ուրախանում և զուարճանում են բարեմիտ գիւղացիք, բայց այս տեղ Վերմանացի կոշիկարներ և դերձակներ:

Այս հին օտնի հետ միացած են և քանի մի սնապաշտութիւնք: Ե վէտից գիւղացիքն հաւաստի են՝ թէ այն ընդհին՝ երբ որ արեգակն մտանում է 'ի մայրն և յանկարծ դարձեալ երևում է, կարելի է տեսանել ճանապարհաց գլխուումը (քերտոն) կախարչներ, թովիչներ, դիւթեր, և այլ այնպիսի մարդիկ՝ որք գիտեն ապագայ դիպուածքը գուշակել: Աթէ օրիորդաց մինն կամենայ իմանալ՝ թէ արդեօք ինքն շոյտ պիտի ամուսնանայ, և թէ՛ ով պիտի լինի իւր փեսայն, գնում է այն գիշեր 'ի դաշտ, հաւաքում է ինն տեսակ զանազան ծաղիկներ, կապում է մի փունջ, և դնում է նորան իւր բարձի տակ: Աւերբ որ նա 'ի քուն մտնի, իւր ամէն կամեցածը և ցանկացածը կարող է տեսանել:

Ճանապարհորդքն այն գիշեր կանուում են 'ի Մաթթարէնկի կամ յՕֆօլէր - Թօրնէօ գիւղերից՝ երեկոյեան տասնութուրդ ժամուն՝ անցանում են Թանկիլի ջուրը և եղևինի և մայրի անտառների միջէն կանուում են Նվազաբայի դուրը: Այս տեղէն երևում է երկայն դաշտավայրն որոյ վերայէն ընթանում է Թօրնէօ գետն, որոյ եզերքն զարգարուած են գեղեցիկ տներով: Այն գիշերին, արեգակն պայծառափայլ ժամանակին, այս տեսարանս՝ որ մի անօրինակ տեսարան է, յափշտակում է մարդոց աչաց տեսութիւնը, և նորա սրտի վերայ մի անպատմելի ազդեցութիւն ունի:

Բայց այս տեսարանս՝ որոյ համար Նեղոզացիք գնում են Նվազաբայ, կարելի է տեսանել յրթագս քանի մի շաբաթուց Աթօքհովի և Փեթերպուրկի մէջ: Մայիս ամսէն ըսկսեալ՝ գիշերներն այնպէս շոյտ կարճանում են՝ որ ցերեկից զանազանում են միայն աղօտ վերջալուսով: Արեկոյն՝ կարելի ճանաչել միայն այնու, որ թռչուններն լուում են պարտեզների մէջ, ծառոց տերևներն առաւել չեն տատանում քամիից, Նէփայի այլքներն հանդարտում են, և կազմում են հայելոյ նման մի տափարակ մակերևոյթ: Արեգակը աներևութանում է, թողույ իւր ետեւն ծիրանափայլ վերջալոյսը՝ իբր հաւաստի նշանակ իւր շոյտ վերադարձին: Ով հիւսիսի զուարճագեղ երկիւններ: Ով որ գոնէ միանգամ տեսած է ձեզ, երբէք չէ կարող մոռանալ: Այն երջանիկ վայրկեաններումը, ոչ մի սէր և ոչ մի ուրախութիւն կարեն ծնանիլ առանց կրօնական խորին զբացմանց: Այսպիսի լուսապայծառ գիշերներում՝ բնաւ Եքսիիրը չճանաչողն ևս՝ կարող է ինքնին ստեղծանել Midsummer night dream. իսկ եթէ երևակայել չգիտէ, թող կարգայ Աորտալթի գեղեցիկ ոտանաւորները տարւոյ երկարագոյն օրի վերայ:

*գետնից վերայ կը գոյցայ ա յոգոյ
տոյն միջոցս այնի յոյ յոյսոյ
գարնաւորս աչ միջոց յոյսոյս
այնի մէջոցս յոյսոյս յոյսոյս*

ընդ մեր ազգին իւր գիտութեամբը, որով և առ սակաւ սահաւ պահանջները հոգեւորականաց վերայ եղած բաւքասանքը: Աւելորդ չէ լինելու անել այս տեղ և այս՝ թէ շնորհիւ այս նորընծայ քահանայիս՝ Գօրայ եկեղեցիներում առաջին անգամ լսուեցաւ Հայերէն լեզուաւ քարոզ Հանդերձ թարգմանութեամբ ի Վրաց լեզու. վասն զի Գօրեցիք առհասարակ Հայերէն խօսել չգիտեն, և այդու իսկ ազգասիրական եւանդ ձգուելով նոցա մէջ, ամենքն այժմ սկսած են Հայերէն լեզուն ուսանել:

1862 թուականի համար տպուած Փեթերպուրկի Աղանձիական Օրացոյցի մէջ նշանակուած կայ Ռուսաստանի Հայոց երկու վիճակի մէջ, այն է՝ Աստրախանու և ՆորՆախիջևանի և Պեսարապիոյ, 1859 թուականում ծրուած, մեռած և ամուսնացած Հայոց թիւը, որ այս է.

	Մեռածքն.	Ամուսնացածքն.	Մեռածքն.
Աստրախ.	Վ. 573. 595. 1168.	224.	437. 411. 848:
Նախիջ. և Պես.	Վ. 450. 409. 859.	223:	275. 290. 265:

ՆԵՐՔԻՆ

Նետ երկրաշարժութեանն, որ եղաւ Մայիսի 13 ին քիւրտ-բէնտ գիւղի մօտ, Լիմանի վերայ (որ յայտնի է Բուրս - ձեւում - Արտանունով) որի մէջ կար մի փոքր ջուր, երեւցաւ բաւական շատ, ըստ պիտակ և յստակ աղ: Այդ տեղը Չարտօպից համարեալ թէ 8 վերստ հեռաւորութիւն ունի, և որովհետեւ այդ աղը կերակուրի մէջ գործածութեան համար շատ ձեռնտու է, բնակիչները սայլերով տանում են նորան. և այսպէս բաւականին պաշար են արած: Այսպիսի գիւտն փոքր բան չէ մանաւանդ այն տեղի համար, ուր շատ ստոր աղը համար վճարում են 40 կոպ. փութին:

— Թականորկից մինչև Լոնտոն նորերումն ելքարական գիծ բաշտեցաւ, և որի վերայ եղած փորձառութիւնքը ասում են թէ ըստ ամենայնի յաջողեցան: Այդ ելքարական գիծն անցանում է Օտեսսայի և Վարշաւի վերայէն ի Վերլին, իսկ այս տեղից ի Վակա և ի Լոնտոն: Ելքարական գիծ երկայնութիւնն է 3,000 վերստ:

— Երկրային նախնութեաց համարների մինի մէջ յիշուած Ռիկայից մինչև Տինապուրկ շինուած երկաթուղոյն շոգեկառքից երանելին ժամերն նշանակուած են հետևեալ կերպիւ: Ռիկայից արագընթաց

(Ճանապարհորդներով միայն) շոգեկառքն ելանում է ժամը 2 ին յետ կէս աւուր և հասանում է Տինապուրկ երեկոյան ժամը 8 ին և 53 րոպէին (Փեթերպուրկեան շոգեկառքը ելանում է Տինապուրկից ժամը 2 ին գիշերուայ): ծանր գնացող շոգեկառքն (այսինքն և Ճանապարհորդներով և ապրանքով) ելանում է Ռիկայից երեկոյան ժամը 6 ին, և հասանում է Տինապուրկ ժամը 9 ին և 18 րոպէին առաւօտու: Տինապուրկից արագընթաց շոգեկառքը ելանում է Ռիկայ գնալու համար առաւօտեան ժամը 8 ին և 6 րոպէին, և հասանում է Ռիկայ ժամը 2 ին և 48 րոպէին յետ կէս աւուր: Իսկ ծանր շոգեկառքը ելանում է Տինապուրկից ժամը 6 ին և 6 րոպէին երեկոյան, և հասանում է Ռիկայ ժամը 10 ին և 32 րոպէին: Այսպիսի ժամակարգութիւնը ասում են թէ ըստ ամենայնի յարմար չէ:

— Բոլոր Ռուսիոյ մէջ 1859 թուականում կար 9,346 ուսումնարան 542,765 աշակերտներով, յորոց կայսերութեան մէջ կար. 7,773 ուսումնարան 453,123 աշակ. և հաց թագաւորութեան մէջ 1,462 83,543 ֆինլանտիոյ մէջ. 111 6,099

ԱՐՏԵՐԻՆ

Փորթուգալացոց թագաւորական տունն կարճ միջոցում անակակաւ և մեծ հարուած կրեց: Նոյեմբերի 6 ին (Հոկտեմ. 25 ին) վախճանուեցաւ թագաւորի եղբայրն. Տոն-Ֆեռնանտո տ'Ալբանթիա, որ տանն և հինգ տարեկան էր, իսկ ամսի 11 ին (Հոկտ. 30 ին) գերեզման իջաւ և ինքն թագաւորն. Թագաւորի երկու եղբայրն ևս, որք են՝ Տոն-Փետրո և Տոն-Աուկուստո վտանգաւոր հիւանդ են: Միւս արքայազունքը, այսինքն՝ Գուբն տ'Օփորթօ և Գուբն տե Պէյա, որք գտանում էին Բոմիլիէնում՝ շտապաւ իւրեանց հրաժարական ողջընթացով Գաղղիոյ կայսեր, վերադարձան ի Լիսապոն: Առաջինն նոցանից, այն է՝ Գուբն տ'Օփորթօ, հրատարակուեցաւ թագաւոր Փորթուգալիոյ: Վախճանեալ թագաւորն ծնած էր 1837 թուականին Նոյեմբերի 16 ին, ուրիշն էր նա 25 ամաց: Իսկ յաժողո. նստաւ նա յետ իւր մօր մահուան 1853 թուականին Նոյեմբերի 15 ին ընդ հոգաբարձու թեմաքի իւր հոր: Կառավարութիւնը անցաւ ըստ ամենայնի նորա ձեռքը Նոյեմբերի 16 ին 1853 թուականին: Նոր տ'Օփորթօ թագաւորն ծնած է 1837 թուականին Հոկտեմբերի 31 ին:

— Պատէն քաղաքի մէջ, որպէս և Անգղիայում և Պէլճիքիում կանայք սկսան ելքարական գիծ համբաւ առաքողների պաշտօնները կատարել: Ելքարական գիծ պաշտօնակատար անձանց կանայքը և դատերը մտանում են այդ ծառայութիւնը, և կատարում են իրեանց գործը մեծ ջանքանդութեամբ:

— Ի յիշատակ Լորտ-Պայրնի աշխատութեան, որ նա ունեցաւ Յունաստանի աղաւթութեան համար, Մեթուէն անցեալ տեղում, որ նա վախճանեցաւ, կամենում են արձան կանգնեցուցանել: Երկու գետը այս տարի սաստիկ մեծացաւ, մինչև անգամ մեծամեծ վնասուց պատճառ եղաւ: Բամբակի երրորդ մասն փչացուց, որպէս և շաքարի եղեգները:

ԵՐՈՒՆԱՏԵԿԱՆ

Մին Գաղղիացի հնարեց այնպիսի ոսնաման բառուտից շինուած, որով կարելի է ման գալ ծովն վերայ, այնպէս որպէս ման եւթ գալիս ցամաքի վերայ: Փարիզը մէջ կատարուած փորձերը լիովին յաջողուեցան:

ԽՐԲԱՅՐԻՉ Զ. ՄՄԵՐԵԱՆՅ

ՀԱՄԱՐԱՅԻՆ ԹԻՒՆՈՅ

ՄԱՐՏԻՍԻՍ ԵՎ ԵՂԵՆԻՍԻ ԳԻՐԻ

ՔՐԻՍՏՈՍԱՊՈՍՏԻՍ

ՀԱՄԱՐԱՅԻՆ ԹԻՒՆՈՅ ԼԵԻՏԱՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՆԱԿԵԸ ԾԵՆՈՒԹԻՒԹԵԱՄԲԻ

Ի Մերայ Մաքիտրուսի Կրօնաւարացի և արժանաւոր Լազարեան ճեմարանէ:

Սուրբուա. 1861. 162 էրես. 162. Գինն քաղաքիս մէջ է 50 կոպ. արծ. իսկ այլ քաղաքներ ուղարկելու համար գնողն պարտական է վճարելու նաև փօստի ծախքը, հաշուելով մէկ օրինակից մինչև երեք օրինակ մէկ փունթի տեղ այն է՝ 30 կոպ. արծ.